

Էդ. Աղայան

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ե՛ր մի ուսումնասիրության մեջ մենք հայտնել ենք այն տեսակետը որ հին հայերենը կազմավորվել է հին հայերեն բարբառների միաձուլումով կամ նրանցից մեկի հիմքի վրա՝ իր մեջ առնելով մյուս բարբառները։ Այդ բարբառները, որոնց մահացման շրջանն ենք համարում մեր թվ. առաջ I, մինչև մեր թվականության II դարերը, մենք կոչել ենք հից հայերեն բարբառներ, ի տարբերություն նոր հայերեն բարբառների, որոնց սաղմնավորման շրջանն ենք համարում մեր թվ. II — IV դարերը։ Նույն ուսումնասիրության մեջ մենք հիշել ենք որոշ տվյալներ, որոնք հին հայերեն բարբառներից պահպանված հետքեր են։ Այստեղ խորձում ենք ավելի մանրամասն քննության առնել այդ տվյալները, հիմնավորել, որ, իրոք, դրանք հին հայերեն բարբառների մնացորդներն են և ավելացնել մի քանի նորագյուտ տվյալներ։

1. Իր չհայոց լեզվի պատմության¹ երկրորդ հատորում² քննության առնելով բարբառային հնագույն տարբերությունների հարցը՝ մեծալատասկ հայագետ Հրաչյա Աճառյանը հատուկ ուշադրություն է դարձնում հին հայերենի ը կամ ղ-ով ովսվող բառերի սկզբում ավելացած ա կամ ե ձայնավորների վրա և, հավաքելով այն բառերը, որոնք ունեն զուգաձևեր, այսինքն՝ մեկը նախահունչ ա-ով, մյուսը՝ ե-ով, գտնում է, թե զկարելի է ընդունել, որ այդ երկուսը բարբառային ձևեր են³։

Այդ բառերը հետևյալներն են.

աղաւնի—եղունիկ, եղվիսիկ
եկ, եկն—ակալ, ակիք
եղբայր—աղբայր, աղբար, աղբեր
եղիճ—աղիճ, աղինջ, եղինջ (նաև լէղիճ, խաղինջ)
եղունգ—աղունգ, օղունգ, ուղունգ, դունգ, ըղինգ, դինգ
եղջիւր—աղջիւր, աղջեր
երազ—արազ
երախալ—արախալ
երաշտ—արաշտ
երակ—արակ
երեկոյ—յարակու, հարակու
երեսուն—արասուն, յարասուն
երեալ—արեալ

¹ Տե՛ս Է. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 362—439։

² Նույն տեղում։

հրինջ — արինջ
 հրկաթ — արկաթ
 հրկան — արկան, արկանք
 հրկո — արկո, օրկո¹

Մեր «Մեղրու բարբառը» աշխատության մեջ, և ձայնավորի փոփոխությունները նվիրված հատվածում, ելնելով նույն ենթադրությունից՝ դատմ ենք, որ «Մեղրու բարբառում ալդ բառերի ստացած ձևերը նկատի ունենալով, կարող ենք ենթադրել, որ Մեղրու բարբառը պատկանել է այն բարբառների թվին, որոնց մեջ ավելանում էր ա ձայնավորը»²:

Մեր նոր տեսությունը մի կողմից որպես տեսական հիմք ծառայելով ալդ կարծիքին, մյուս կողմից պահանջում է լուրջ քննության ենթարկել ալդ բառերը պատմական մոտեցմամբ: Այդպիսի քննությունը պետք է ցույց տա, որ՝ ա) հայերեն բարբառների մի մասի համար ընդհանրական, կամ գոնե գերակշռողն է ա-ով ձևը, իսկ մյուս մասի համար՝ ե-ով ձևը. բ) հայերեն բարբառներից գոնե մեկի ա և ե-ով ձևերը դուգահեռներ չկազմեն և նրանցից լուրաքանչյուրը դրսևորի որոշակի օրինաչափություն: Եթե հիշյալ բառերի քննությունը հաստատի ալդ երկու դուելթը, ապա՝ Աճառյանի ենթադրությունը կարող ենք անսուղիքի համարել. հակառակ պարագայում խնդիրը դարձյալ վիճելի կմնա՝ իմենք, ուրեմն, բարբառների ավելներին: Մասունա-սիրելով մեր բարբառներում ալդ բառերի ձևերը՝ տեսնում ենք հետևյալը. Աղուլիսի, Մեղրու, չարաբաղի, Կարճահանի բարբառները ունեն միայն ա-ով ձևը՝ աղաւնի, եղբայր, եղին, երազ, երաշա, երակ (կա միայն Մեղրու բարբառում), երկոյ, երեսուն, երկաք, երկանք բառերի դիմաց. Կարնո, Մշո, Վանի, Համշենի, Երեանի, Ջելթունի բարբառները ունեն միայն ե-ով ձևը եղունգ, երազ, երախայ, երակ, երկոյ, երեսուն, երևալ, երկաք, երկան երկու բառերի դիմաց: Մյուս բառերի դիմաց երկրորդ խմբի բարբառները ներկայացնում են խառը վիճակ, այսինքն, մի բարբառում՝ այս, մյուսում՝ այն ձևն ունեն, ինչպես՝ Երեան՝ աղինջ, բայց՝ Համշեն, Մուշ, Վան՝ եղինջ, յնդինջ: Սրանից պետք է եզրակացնել, որ իրոք մեր հիմնական բարբառները բաժանվում են երկու խմբի. նրանցից մեկին բնորոշ է ա-ով ձևը, մյուսին՝ ե-ով ձևը: Եւայց այսօր մեր բարբառների մեծագույն մասի մեջ կա շփոթ վիճակ մի քանի բառերում, որ բացատրվում է հին բարբառների փոխադրեցությունից: Սա միանգամայն բնական է, որովհետև ալդ տարբերությունները, որպես օրինաչափ երևույթ, գոյություն են ունեցել հին հայերենի կազմավորմանը նախորդած շրջանում:

Թեև բարբառային ալդ երկու խմբերը ներկայացնում են, որպես կանոն, ա կամ ե ձևը, բայց հենց ալդ բարբառներում էլ գտնւում ենք մի խումբ բառեր, որոնք ունեն միայն ե-ով ձևը. ըստ որում, կան բառեր, որոնք ոչ մի բարբառում ա-ով դուգահեռը չունեն. դրանք են՝ երես, երեք, երկ, երեց, երկրալ: Այս բառերը, ինչպես տեսնում ենք, դրսևորում են հակառակ օրինաչափություն բարբառների այն խմբում, որ բնորոշվում է նախահունչ ա-ի հավելումով: Չի՞ հերքում, արդյոք, այս փաստը մեր նախորդ պնդումը: Ոչ,

¹ Հ. Աճառյան, Անդ, էջ 413:

² Հղ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 31—34:

ի հերքում, այլ միայն հաստատում է: Այսպես, Մեղրու բարբառում ունենք սկզբից ա կամ ե ստացած ը կամ ո-ով սկսվող հետևյալ շարքերը.

ա-ով

Լղրայր—ախպէր,	Երեսուն—արասուն
աղիւն—հաղէնջ	Երկաթ—արկաթ
Երազ—արազ	Երկան(ք)—արկանք
Երաշտ—արաշտ	Նստե՝
Երակ—արակ	Երծաթ—արծաթ
	Երասխ—Արասխ

ե-ով

Երկու—էրկու	Երէկ—իրիկ(է)
Երևալ—իրիվալ, իրվալ	Երկալն—էրէն
Երևս—իրիս	Երինջ—հէրէնջ
Երևք—իրիք	

Երևիսայ, աղավնի բառերի մեջ, ըստ կանոնի, նախահունչ ձայնավորը դարձել է ը (ըրախէ>րախէ, ըղօնէ), ուստի և զփվար է սակ, թե նրանք ա-ով թե ե-ով ձևն են ունեցել: Երևկով բառի դիմաց ունենք ըակու և ալե-լի քիչ զործածվող արակու ձևերը:

Երդումն բառի դիմաց ունենք իւրդիւմ:

Հնչւտ է նկատել, որ առաջին հայացքից շփոթ ներկայացնող այս շարքերը դրսևորում են մի կուռ օրինաչափություն. բոլոր այն բառերը, որոնց մեջ ունենք ա ձայնավորը, ը-ից առաջ ստացել են ա (Երազ, Երակ, Երաշտ, Երկաթ և այլն), զ-ից առաջ տնիտիր ստացել են ա և այս պարագայում ե-ով ձև չունենք: Բոլոր այն բառերը, որոնք բառի մեջ ունեն ե, ստացել են ե (Երևս, Երևալ, Երևք ևն). ե>ի փոփոխությունը բարբառիս մեջ կանոնավոր Երևույթ է¹: Երևումն բառը ունենք արատւն ձևով, որ շեղվում է կանոնից, բայց հենց դրանով էլ հաստատում է օրինաչափության կանոնավորությունը. այսպես՝ երևումն բառն ստացվել է հնիւ. trek'omtə ձևից, որի առաջին բաղադրիչն է tri> հյ. երեք: Երևումն բառը, որ պետք է լիներ բևումն, քառասուն բառի համարանությունը դարձել է բատուն² և ըստ կանոնի ստացել նախահունչ ա, մինչդեռ նույն արմատից ծագած երեք բառում ալկրացել է ե, որովհետև հաջորդ ձայնավորն է ե: Սա ցույց է տալիս նաև, որ բևումն ձևի մեջ քառասուն-ի ազդեցությամբ ե>ա փոփոխությունը ալկիի նախնական երևույթ է, քան նախահունչ ձայնավորի հավերժումը: Գեղեցիկ օրինակներ են երևել>իրիկե, բիկե և երևկոյ>ըակու, արակու ձևերը, որոնք, միևնույն արմատից ծագած լինելով, բարբառումս մի գեպքում սկզբում ե>ի ունեն, մյուս գեպքում՝ ա, ըստ հաջորդ ձայնավորի համապատասխանություն:

Երդումն բառի իւրդիւմ ձևի մեջ Մեղրու, Ինչպես և Աղուլիսի, Ղարաբաղի, Մարաղայի և մի քանի ուրիշ բարբառներում, տարօրինակ կերպով

¹ Տես «Մեղրու բարբառ», § 41:

² Մեղրու բարբառն այժմ էլ ունի բատուն ձևը, որ զործածվում է ձայնավորով վերջացող բառից հետո զործածվելու գեպքում:

ունենք ու>իւ, որ հիշյալ բարբառներում դարձել է իւ, օ կամ իօ. ըստ-
րում, այս բառի զբարարյան նախահունչ և-ն ոչ թե հավելվածական է, այլ՝
արմատական: Երկումն բառը ծագում է հնիւ. *ertu ձևից, որի նախահունչ
Է-ն հայերենում օրինաչափ կերպով պետք է դառնար և, ինչպես ունենք
զբոբարում և շատ բարբառներում: Մեղրու, Ագուլիսի և մյուս բարբառների
ու-ով ձևը տարօրինակ բացատրություն է: Բայց հենց այս մի-միակ երացա-
ռությունն էլ մի կուտ օրինաչափություն բացահայտելու բանալին է: Դժվար
է է կռահել, որ այդ բառի մեջ եղած ու-ի առնմանությունը է, որ նախահունչ
և-ն դարձել է ու և ապա՝ հիշյալ բարբառներում վերածվել իւ, օ, իօ-ի ըստ
յուրաքանչյուրի հնչյունափոխական կանոնների: Եվ քանի որ արմատական
ձայնավորն անգամ՝ ր-ից առաջ լինելով՝ առնմանվել է հաջորդող ձայնավորին,
ապա սրանից բխում է հետևյալ հնչյունական օրենքը. ճին ճայեքնե բարբառ-
ների մի խմբում ր-ով սկսվող բառերի սկզբում ավելացել և այն ձայնավորը,
ինչ որ եղել է բառի մեջ: Բարբառների մյուս խմբում անխտիր ավելացել
և և: Այս կանոնին հակասող միակ օրինակն է Մեղրու բարբառի երկու բառը,
որի սկզբում ունենք և, թեև հաջորդ ձայնավորն է ու: Բայց այստեղ էլ ան-
կանոնությունը վերանում է, երբ նկատի ենք ունենում Կարճևանի բարբառի
օրկու, յօրկու ձևերը, որոնք ցույց են տալիս, որ Մեղրու բարբառն էլ նա-
խապես ունեցել է օրկու ձևը, որի մեջ օ< ու փոփոխությունը օրինաչափ է,
բայց հետագայում կամ այլ բարբառներից կամ զրականից լուրացրել է երկու
ձևը: Որ այդ այդպես է, ապացուցվում է նաև Ագուլիսի բարբառի տվյալով:
Այդ բարբառի մեծահմուտ ուսումնասիրող Հ. Աճառյանը բարբառային ռիկիւ
ձևում նախահունչ ե-ի փոխարեն տ-ի առկայությունը ճիշտ կերպով համա-
րում է որևէ կանոնի չենթարկվող ձև¹: Բրոք, բազմաթիվ բառերից միայն
երկու և երկնջ բառերն են, որ ե-ի դիմաց ունեն ւ: Սակայն երբ, ելնելով
վերևի կանոնից՝ քննում ենք այդ ձևը, ապա պարզվում է, որ այստեղ էլ
նախաձևը եղել է ոչ թե երկու, այլ որկու, ըստ որում երկվանի բառերի
սկզբում ու-ն դառնում է ա կամ լ². ա> ա փոփոխությունը տեղի է ունեցել
վերջավանսի ու>իւ-ի ներդաշնակությամբ: Այսպես վերանում են բոլոր շե-
ղումները հիշյալ կանոնից Մեղրու բարբառում, ր այդքան անաղարտ կեր-
պով պահպանել է այդ հնազույն օրինաչափությունը: Առանձին են մնում
երկուսից ավելի վանկից բաղկացած բառերը, որոնք Մեղրու (և Գարբաղի)
բարբառում ր-ից առաջ չունեն ձայնավոր. բայց դրանց մասին կխոսվի
ստորև:

Ինչ վերաբերում է զբարբառին, ապա, ինչպես դիտենք, այս կետում նա
ոչ մի կանոն չունի, որ նշանակում է, թե հին հայերենի կազմավորման ժա-
մանակ զուգահեռ ձևերը մուտք են գործել նրա մեջ, և ժամանակի ընթաց-
քում զերակշռություն է ստացել նրանցից մեկն ու մեկը, թեև մյուսն էլ
երբեմն գործածվել է:

Այսպես, ահա, բազմահմուտ հայագետ Հրաչյա Աճառյանի խորաթա-
փանց կուտումը հաստատվում է, և այն էլ այդպիսի զեղեցիկ օրինաչափու-
թյամբ: Այս օրենքի հաստատման և նրա ժամանակը որոշելուն ծառայող
հիանալի տվյալ է Երուանդ անձնանունը: Ինչպես հայտնի է, այդ անձնա-

¹ Հ. Աճառյան, Քննությունն Ագուլիսի բարբառի, 1935, էջ 44:

² Նույն տեղում, էջ 83:

նունը իրանական փոխառություն է. իրանական ձևերն են՝ ղենդ. *aurvant*, պհլ. *arvand*¹, հայերենի ընդհանրացած ձևն է Երուանդ, որի մեջ նախահունչ իրանյան *a-*-ն դարձել է ե: Այս անվան հնագույն հիշատակությունը կա Անտիոքի նախնիների արձանագրությունների մեջ՝ *Ἀροανδ-τιν*, *Ἀροανδ-ου* = Երուանդ ձևերով, և Քսենոֆոնի Վնահանջ Բյուրուցքում ու Պլուտարքոսի մոտ՝ Օրոնտ ձևով: Թե՛ *Քսենոֆոնի*, և թե՛ *հիշյալ արձանագրությունների* մեջ հիշված Արուանդ, Օրոնտը չհայաստանի սատրապ, Աքեմենյան Արտաքսերքսես արքայի փեսա Երուանդն է, որ, ինչպես հայտնի է, իշխել է մեր թվ. առաջ IV դարում²: Երեք ձևերի (Արուանդ, Երուանդ, Օրոնտ) առկայությունը բացատրել կարելի է միայն վերը սահմանված կանոնով: Երուանդ ձևում *ա-*-ն փոխարինվել է *ե-*-ով այն բարբառներում, որոնց մեջ ընդհանուր կանոն էր *ը-*-ից առաջ անխտիր ավելացնել *ե* ձայնավորը: Արուանդ և Օրոնտ ձևերը, հետևաբար, հատուկ էին հին հայերեն բարբառների այն խմբին, որ *ը-*-ից առաջ ուներ այն ձայնավորը, ինչ-որ կար հաջորդ վանկում: Ըստ որում Արուանդ ձևը իրանականին նման լինելով, միաժամանակ համապատասխանում է նաև այս կանոնին, քանի որ ուա երկրորդական մեջ վանկարարն է ա, ուստի և բարբառների այդ խմբում նա ըստ կանոնի պետք է այդ ձևը պահեր: Այսպիսով, Երուանդ անվան այս տարբեր ձևերը հիանալի կերպով հաստատում են վերը սահմանված կանոնը: Բայց այդ ձևերին զուգընթաց, Արտաշես Ա-ի արամեատառ արձանագրության մեջ հանդիպում ենք Երուանդ անվան ածանցված ձևին, որ է. *rwandakan* = *rwandakan* = րուանդական³: Այստեղ, ինչպես տեսնում ենք, հակառակ հայերենի այն կանոնին, որի համաձայն որևէ բառ չի կարող *ը-*-ով սկսվել, րուանդական ձևը կորցրել է անգամ իր ա (կամ ե) նախահունչ ձայնավորը: Սա, իրոք, տարօրինակ ձև է: Եվ այնուամենայնիվ, այս տարօրինակ ձևը շատ արժեքավոր է մի այլ լեզվական երևույթի բացահայտման համար⁴: Վերը մենք ասացինք, որ Մեդրու բարբառում, իսկ առանձին գեպքերում նաև Ագուլիսի ու Ղարաբաղի բարբառներում, երեկոյ, արեգակ, երեսուն, երեսայ բառերն արտասանվում են րակու, րեցակ-ճրեցակ, րաուուն (արասուն), րախե: Երբ այս բառերը համեմատում ենք այդ բարբառներում *ը-*-ից առաջ ձայնավոր ունեցող բառերի հետ, տեսնում ենք, որ սրանք բոլորն էլ եռավանկ բառեր են, իսկ վերը բերվածները՝ երկվանկ: Մեր «Մեդրու բարբառը» աշխատության մեջ ուշագրություն դարձնելով *ը-*-ով (և *ղ-*-ով) սկսվող բառերի վրա սահմանել ենք հետևյալ կանոնը. Չհակառակ հին հայերենին, բարբառումս բառերը կարող են սկսվել դ, ր բաղաձայններով. ...*ը-*-ով կարող է սկսվել բառը, եթե *ը-*-ին հաջորդում է որևէ ձայնավոր, ինչպես՝ երեկայ > րախե, արեգակն > րեցակ, արածիլ > րածիլ, երեկոյ > րակու, երազի (երազում) > րազե և այլն⁵: Այս

¹ Հ. Անույան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Բ, 1944, էջ 145:

² Այդ մասին տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. I; Г. Тирацян, Страна Коммагена и Армения, «Известия» АН АрмССР, общественные науки, 1956, № 3, стр. 69—74.

³ Դ. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, «Ճեղքադիր» ՀՍՍՌ ԳԱ, հասարակական գիտություններ, 1957, № 10, էջ 105—109:

⁴ Չի կարելի այդ ձևը բացատրել այն բանով, որ արձանագրության մեջ առհասարակ ձայնավորները չեն գրվել: Մյուս բառերի սկզբում նախահունչ ձայնավորի համար հատուկ նշան կա արձանագրության մեջ, որ նշանի RWNDRN-ը:

⁵ Էդ. Աղայան, Մեդրու բարբառը, 1954, էջ 183:

կանոնը ճիշտ է, բայց հետևյալ լրացումով, որ այժմ ենք կատարում՝ Լընելով վերը քննված տվյալներից. ձայնավորից առաջ Լըզած ը-ով բառը կարող է սփսլել առանց նախահունչ ձայնավորի, եթե բառը երկու կամ ավելի վանկից է բաղկացած: Այս ճշտումը լավագույնս ապացուցվում է Լըազ > արազ. բայց՝ (յ)Լըազի > րազի (մակրայ), արածել > րածիլ, բայց արած արիլ բառերով, որոնք ունեն նախահունչ ա, Լթև նրա հետ միասին Լըկու վանկ են կազմում, և զուրկ են նրանից, Լթև առանց նրան արդեն Լըկվանկ են: Սրանից բխում է այն, որ հին հայերեն բարբառների այդ խմբում Լըկվանկ ու ավելի վանկանի բառերը պետք է սկսվեն ը-ով, առանց նախահունչ ձայնավորի, և հիշյալ արձանագրության ընդհանրական ձևը՝ միանգամայն համապատասխան լինելով այդ կանոնին՝ իբրև հին և աներկբայելի տվյալ հաստատում է այդ կանոնը:

Վերջապես, քանի որ վերը հիշված Արուանդ, Օրոնտ, Երուանդ և այս ընդհանրական ձևերը հանդիպում են մեր թվ. առաջ IV—II դարերի հուշարձաններում, այս, ինքնին հասկանալի է, որ վերը սահմանված կանոնները գործելիս են եղել այդ դարերում: Հայանի է, որ մի հատուկ ուսումնասիրության մեջ¹, ապագրված Պատրուբանի հրատարակած Sprachwissenschaftliche Abhandlungen հանդեսում, Հյուբշմանն ուսումնասիրել է հայերեն ի, ու, է, եա, եայ, ոյ, իւ ձայնավորների ու երկրարարանների սղման ու ամփոփման օրենքների ժամանակաշրջանի հարցը. Լընելով այն փաստից, որ այդ օրենքին ենթարկվում են բոլոր հին պարսկական փոխառությունները, ասորական փոխառությունների մեծ մասը (հին փոխառությունները) ենթարկվում են, մյուս մասը (IV դարից հետո փոխառվածները)՝ ոչ, իսկ հունական փոխառություններն առհասարակ չեն ենթարկվում, Հյուբշմանը ճիշտ կերպով եզրակացնում է, որ այդ օրենքը գործել է մինչև մեր թվ. երկրորդ դարի վերջերը և երրորդի սկիզբները: Օրուանդ բառի տարբեր ձևերի և ընդհանրական ձևի մասին մեր ասածը, առանց Հյուբշմանի եզրակացությունը հակասելու, նշանակում է միայն, որ այդ օրենքները գործելիս են եղել արդեն մեր թվ. առաջ III—IV դարերում: Իսկ սա, իր հերթին, Հյուբշմանի հիշյալ դրույթի հետ միասին, հաստատում է մեր այն պնդումը, որ հին հայերեն բարբառների մահացումը տեղի է ունեցել մեր թվ. առաջ I և մեր թվ. II դարերում:

2. Քույր բառի հոլովումը բազմազան ձևեր է ներկայացնում հայերեն բարբառներում: Գրաբարյան սեռական քևռ հոլովածի փոխարեն մի կողմից ունենք միջին հայերենի քօր, քուրոջ և մի շարք բարբառների և ժամանակակից հայերենի քրոջ (քուրոջ, քուրոչ և այլ հնչյունափոխված տարբերակներով), երկրորդ կողմից՝ բարբառային քվոք (քվուռ և այլ հնչյունափոխված տարբերակներով) և երկրորդ կողմից՝ այլ բարբառների քվել (քվիլ և այլ հնչյունափոխված տարատեսակներով): Մի կողմ թողնելով միևնույն ձևի հնչյունափոխված տարբերակները՝ ստանում ենք, այսպիսով, քույր բառի սեռականի հետևյալ հիմնական ձևերը. քևռ, քօր, քրոջ, քուր, քուել: Գրաբարյան քևռ ձևը, ինչպես հայտնի է, օրինաչափ կերպով ծագում է հնի. swesros սեռականից, և որևէ նոր դիտողություն կամ բացատրության տե-

¹ Zur Chronologie der arm. Vokalgesetze, Sprachwissenschaftliche Abhandlungen, v. Patrubany, № 1, S. 129—172.

դիք չի տալիս: Հեշտ ևս բացատրվում նաև քոր և բրոջ ձևերը, որոնցից առաջինը ձևացել է հօր, մօր, ևլրօր ձևերի համարանությունից, իսկ երկրորդը՝ կնօջ ձևի համարանությունից: Առանձին են մնում քուոր և քուեր ձևերը. դրանց մասին մեծավաստակ հայագետ Հր. Աճառյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «միջին հայերենում հայր բառը իր ամբողջ խմբով (մայր, եղբայր ևն.—Է. Ա.) պահեց իր հոլովումը... սրանց է հետևել նաև քոյր բառը, որ սևտականի մեջ դառնալով նախ քուեր, ապա երբեմն քօր և երբեմն քուրոջ, զրկվել է անկախ անկանոն հոլովում ունենալուց (առաջին դեպքում հետևել է հայր բառին, երկրորդ դեպքում՝ կին բառին): Քուեր միջին ձևն է քույր, քուր, սեռ. քեռ և քօր ձևերի»¹:

Այս բացատրությունը միանգամայն ճշմարիտ է իր առաջին մասով, այսինքն՝ քօր և քուրոջ ձևերի վերաբերյալ: Քուեր ձևի ծագումը հայր բառի սևտականի համարանությունից՝ հալանական չէ, ալդպես և՛ քուոր ձևի ծագումը: Ուսուեմնասիրելով հնիս. swesor բառի հոլովաձևերը և նրանց համապատասխանները ցեղակից լեզուներում՝ գտնում ենք, որ հայերեն քուոր և քուեր ձևերը բացատրվում են միայն հնդեվրոպական swesor բառի սևտականի ձևերով: Ինչպես ասացինք, քեռ ձևը ծագում է հնիս. swesros-ից. բայց հնդեվրոպական լեզվում, ինչպես հայտնի է, շատ մեծ տարածում ունեն Ժայն-գարձը: Եուրև swesros ձևից, Ժայնգարձի զանազան աստիճաններով, կարող էինք ունենալ՝ sweseros, swosoros, swoseros ձևերը. ալդ, հայերենի քուոր և քուեր ձևերը ծագում են հենց Ժայնգարձի տարբեր աստիճաններից. քուոր ծագում է swosoros ձևից, որի զուգահեռն է լատիներենի sororis սևտականը, ուր ունենք օ Ժայնավորը երկու վանկում էլ, իսկ քուեր ծագում է հնիս. swoseros ձևից, որի զուգահեռն է կազմում հունարեն Ժայնգարձի բառի առաջին հիմքը, վերջավանկի e Ժայնավորով, որից կազմվում են եզակի հայցականը, երկակիի բոլոր հոլովները, բացի տրականից, և հոգնակիի բոլոր հոլովներն անխտիր: Մեզ համար ավելի դեպքում շատ կարևոր է հենց հունարենի Ժայնգարձի բառի հոլովումը: Ինչպես հայտնի է, հունարենում ալդ, ինչպես և մի քանի ուրիշ բառեր, հոլովման մեջ հանդես են գալիս երկու հիմքով. Ժայնգարձ և Ժայնգարձ, որ նույնպես հնիս. Ժայնգարձի տարբեր աստիճանների արտահայտությունն է և հաստատում է մեր ասածը: Հնդեվրոպական oso, ose հնչյունախմբերի դիմաց (swosoros, swoseros) հայերենի ուռ>վո, ուե>վե հնչյունախմբերն ասացվել են ճիշտ այնպես, ինչպես ուղղականի swesor ձևի eso-ից՝ հյ. ոյ, այսինքն՝ ուղղականի նման, ալդ ձևերում էլ ōso, ose նախ՝ դարձել են ուհո, ուհե, ապա՝ հ-ի անկումով՝ ուռ, ուե²:

Ամփոփելով այս բոլորը՝ դալիս ենք հետևյալ եզրակացություն. միջին հայերենի քուրոջ, քօր ձևերը հինգերորդ դարից հետո կազմված ձևեր են՝ հօր, կնոջ ձևերի համարանությունից: Փրաբարյան քեռ և բարբառային քուոր, քուեր ձևերը զուգահեռ ձևեր են, որոնք բոլորն էլ հնդեվրոպական swesor բառի սևտականից են ծագում՝ Ժայնգարձի տարբեր աստիճաններով և

¹ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությունից 562 լեզուների, հատ. III, 1937, էջ 539—540*:

² Հմմտ. նաև ուռ. cecpa, հոգն. սեռ. cecrēp.

³ s>h-ի անկման մասին տե՛ս A. Meillet, Esquisse d'une gram. comp. de l'arm. classique, Vienne, 1936, p. 39, Հ. Աճառյան, *Անդ, էջ 439*:

ներկայացնում են ճիճ հայերենի բարրառային տարրեր ձևերի շարունակությամբ: Ուշագրավ է, որ գրարարում եզակի տր. բաց. դործ. և հոգնակի սեռ. ար. բաց. դործ. հոլովները կազմվում են նույն հիմքից, իսկ հոգնակի ուղղականն ու հալցականը՝ քոր հիմքից (քորք, քորս), մինչդեռ բարրառանրում, նրանք, որ ունեն քուերք (քվիր ևն) ձևը, բոլոր հոլովները, բացի եզակի ուղղականից, կազմում են միևնույն քուերք (քվէրց, քվէրք, քվէրքով ևն), իսկ նրանք, որ ունեն քուերքք (քվիր ևն) ձևը, եզակի հոլովածեւը կազմում են ալո նույն հիմքից, իսկ հոգնակին՝ ալո հիմքից, կամ, ըստ մեծի մասին, դարձալ քուեր հիմքից: Այս փաստը նույնպես հաստատում է, որ քեռ, քուեր, քուեր ձևերը գուգահեռ, համագոյակից հնագույն ձևեր են և հետքերն են բարրառային հնագույն հարարերութուններին:

Վերջապես, ինչպես վկայում է գրարարի հմուտ մասնագետ Ա. Ալ-բահամյանը, գրարարում էլ ճհանդիպում են նաև երկրորդական ձևեր՝ քուեր, քուերք, քուերց և ալոն¹, իսկ սա, իր հերթին, ևս մի ապացույց է ալո բանի, որ քեռ, քուեր և քուեր ձևերը համագոյակից բարրառային ձևեր են եղել:

3. Գրարարյան -ութիւն մասնիկի դիմաց նոր հայերեն բարրառներում ունենք երեք հիմնական ձև՝ իրենց հնչյունափոխված տարրերակներով: Ալո ձևերն են. -ություն (-ութիւն, -ութուն և ալոն). -ութեւն (-ութէն, -ութէն ևն) և -ութին (-ութին ևն): Առաջին ձևն ունեն Սուչավալի (-ութիւն), Դարարադի (-ութուն), Նոր Զուգալի (-ութուն), Մարադալի (-ութուին, -ութուն), Երեանի (-ութուն), և մի քանի ալո բարրառներ Երկրորդ ձևն ունեն. լեհահալ (-ութին), Նոր Նախիջևանի (-ութին), Պոլսի (-ութին), Համշենի (-ութին), Աղուլիսի (-ութին), Մեղրու (-ութին) բարրառներ: Վերջապես, երրորդ ձևն ունեն Կարնո (-ութէն), Վանի (-ութեն), Մշո (-ութէն) Սվեդիալի (-ութեն) և ալո բարրառներ: Առաջին ձևը հայտնապես ծագում է գրարարյան -ութիւն ձևից: Մշու երկու ձևերը, սակայն, չեն բխում ալո նույն ձևից: Այսպես, ըստ հնչյունական օրենքների, հիշյալ բարրառներում հին հայերենի իւ երկրարարող չի դառնում և կամ ի, ալո՝ կամ դառնում է ու և կամ՝ իւ (ւ), ինչպես օրինակ՝ գր. սիւն > Մեղրի, Աղուլիս՝ սիւն, Կարին, Նոր Նախիջևան, Համշեն, Վան՝ սուն, ձիւն > Մեղրի, Աղուլիս՝ ձիւն, Վան՝ ծիւն, Պոլիս՝ ձուն, Կարին՝ ձ՛ուն, Համշեն՝ ծուն և ալոն: Սրանից պետք է եզրակացնել, որ ալո բարրառների -ութեւն, -ութին ձևերը չեն ծագում գրարարյան -ութիւն ձևից, ալո ենթադրում են նրան գուգահեռ նախալոր ինչ-որ ձև: Ինչպիսիքնարար հարց է առաջանում, թե արդյոք ալո երկու ձևերը (-ութէն, -ութին), իրենց տարրերակներով, միևնույն նախածեւն են ենթադրում, ալո կերպ ասած, նույն ձևից են ծագում, թե՞ ենթադրում են տարրեր նախածեւեր: Այս հարցին պատասխանելու համար պետք է դիմենք հիշյալ բարրառների հնչյունական օրենքներին: Պայմանական կերպով ընդունենք, թե երկրորդ ու երրորդ ձևերը ծագում են մեկ նախածեւից. ալո դեպքում նախածեւ պետք է համարենք կամ -ութեւն կամ -ութին: Եթե առաջինը համարենք, ապա՝ միանգամայն օրինաչափ կերպով կստանանք Կարնո -ութեւն, Վանի -ութեւն, Մշո -ութեւն և Սվեդիալի ուղեւն ձևերը, քանի որ ալո բարրառներում հին հայերենի ե-ի դիմաց ունենք և, և. բալց չենք ստանա լեհահալ, Նոր Նախիջևա-

¹ Ա. Արբանամյան, Գրարարի ձևանարկ, 1932, էջ 86:

նի, Պոլսի, Համշենի, Աղուլիսի և Մեղրու -ուքին, -օքին, -ուտին ձևերը, որովհետև այս բարբառներում նույնպես հին հայերենի և-ի դիմաց ունենք և կամ և: Եթե, ընդհանրապես, նախածեր համարենք, -ուքին, ապա այս ղեպ-քում էլ օրինաչափորեն կստանալինք լեհահայ, Համշենի, Պոլսի, Նոր Նախիջևանի, Աղուլիսի -ուքին (օթին, ուտին) ձևերը, բայց՝ ո՛չ Կարնո, Վանի, Մշո, Սվեդիալի -ուքեն ձևը, որովհետև այս բարբառներում հին ի ձայնա-վորը և կամ ե չի դառնում, ոչ էլ Մեղրու բարբառի -օքին ձևը, քանի որ այստեղ հին հայերենի ի-ն դառնում է և (օր. ղեղին>ղէղէն): Այսպիսով, պարզվում է, որ բարբառային այդ երկու ձևերն էլ իրենց հերթին ծագում են տարբեր նախածերից. Վանի, Կարնո, Մշո, Սվեդիալի ուքեն, ուքեն, ուղեն ձևերը՝ ուքեն նախածերից, իսկ լեհահայ, Նոր Նախիջևանի, Պոլսի, Համշենի, Աղուլիսի -ուքին, -օքին, ուտին ձևերը՝ -ուքին նախածերից: Անորոշ է մնում Մեղրու բարբառի -օքին ձևը, որ դժվար է բխցնել ինչպես -ուքին-ից, որովհետև այդ ղեպքում պետք է ունենալինք -օքին (հմմտ. տիկին>տէկէն, ղեղին>ղէղէն, կացիս>կացէն, ամիս>ամէս), այնպես էլ -ուքեն ձևից, որի դիմաց նույնպես պետք է ունենալինք -օքեն: Բայց եթե նկատի ունենանք, որ Մեղրու բարբառում լ և ը ձայնորդներից առաջ հին հայերենի ե-ն դառնում է ի (ցել>ցիլ, ածելի>ծիլէ, բերել>բիրիլ են), ապա կարող ենք ենթադրել, որ այդ նույն օրենքը գործել է նաև ն ձայնորդից առաջ և, հետև-վաբար, այդ բարբառի մեջ էլ -օքին ձևը ծագած համարել նախնական -ուքեն ձևից:

Այսպիսով, կարող ենք վստահորեն ասել, որ հնագույն շրջանում զուգահեռաբար զոլոթյուն են ունեցել երեք ձևեր՝ ուքիւն, ուքեն և ուքին: Այս պնդումը, սակայն, թեև հաստատվում է վերը բերված տվյալներով, այնու-ամենայնիվ՝ անվերապահորեն ընդունելի կլինի միայն այն դեպքում, եթե հաստատվի նաև համեմատական քերականության տվյալներով: Գիտենք, որ հայերեն -ուքիւն մասնիկը բաղադրված է -ոյթ և իւն մասնիկներից, ավելի ճիշտ, -ուքիւնը ներկայացնում է հնիս. ti-ի ո-ով աճած ձևը, որի համապատասխանն է լատիներեն -tlo (սեռ. tion-is): Ըստ որում, ի ձայնավորը, որ բունն է ներկայացնում և այլ դեպքում պահպանված չէ բառի վերջում գտնվելու պատճառով (հմմտ. երեւթ), այս պարագայում օրինաչափորեն մնացել է: Այսպիսով՝ ո-ի աճած ձևն է հայերենում՝ -ւն: Արդ, այս լն կարող էր ծագել հնիս. -uno, -ono ձևերից, որոնց համապատասխանները առատորեն պահպանվել են ցեղակից լեզուներում¹: Այս ձևերից հայերենում, ըստ հնչյու-նական օրենքների, կստանալինք համապատասխանորեն. լն, -ուլն, որով մաս-նիկը կլինի՝ -ուքի-ւն, -ուքի-ուլն: Ինչպես տեսնում ենք, երկու ձևերն էլ հավասարապես հարմար են հայերենի -ուքիւն ձևին (նկատի պետք է ունե-նալ, որ -ուքիուլն պետք է դառնար ուքիւն, ինչպես՝ ձիուլն>ձիւն): Այս նշանակում է. թի -ուքիւն ձևը ծագել է -uno կամ -ono բաղադրյալ մաս-նիկից: Ուքին ձևը միանգամայն օրինաչափ կերպով ծագում է նույն ո մաս-նիկի պարզ -no, -ոո ձևից, որ կտա՝ ողղականում ուքի-ն, բնականում՝ ուքի-ւն>ուքեւն: Վերջապես, ուքեն ձևի նախնականը պետք է համարել

¹ Տե՛ս Karl Brugmann, Grundriss der Vergleichenden Gram. indogerm. Sprachen, 2te Bearbeitung, II Band, I T. Strassburg, 1906, SS. 254—283.

ուրեւն, որի ծագումը բացատրել դժվարանում ենք, սակայն ստորև բերվող բառերի զուգահեռ ձևերը հաստատում են նաև դրա գոյությունը:

4. Գրարարում կան մի խումբ բառեր, որոնք ունեն զույգ ձև, մեկը եւ, մյուսը՝ իւ երկրարրառով: Դրանցից են. ալեւր—ալիւր, առեւծ—առիւծ, ֆալեւր—ֆալիւր, եղջեւր—եղջիւր, աղաւեր—աղաիւր, աղբեւր—աղբիւր, գեւղ—գիւղ, եւղ—իւղ: Կան, սակայն, ուրիշ բառեր էլ, որոնք ունեն միայն իւ-ով ձևը, ինչպես՝ ձիւն, սիւն, ձիւր, ճիւր, արիւն և այլն: Վերջիններիս մեծ մասի միավանկ լինելը որեւէ նշանակություն չունի, որովհետև առաջին խմբի մեջ էլ ունենք միավանկ բառեր (գիւղ, իւղ): Վերջին շարքի ալն բառերը, որոնք ստուգաբանված են, ցույց են տալիս, որ զուգահեռ ձևեր չունեցողների մեջ իւն-ը ծագել է հնիւ. -ion, -iyon, -iyom-ից, ինչպես՝ ձիւն <*ghiyom, սիւն>հնիւ. k'ion կամ k'iyon ձևից, արիւն <ար+իւն մասնիկից. լավ օրինակ է ձիւր բառը, որ ասորական փոխառություն է՝ Zif և ձիւր. ֆ հայերենում պետք է օրինաչափորեն դառնար ւր (Ֆ չունենալու պատճառով), ճիշտ ինչպես իրանական փոխառությունների մեջ (հմմտ. taft > տալթ > տօթ): Այսպիսով, ալն բառերը, որոնք ունեն միայն իւ-ով ձևը, ծագում են ալնպիսի մի նախածինից, որ կարող էր հայերենում տալ միայն իւ: Առաջին շարքի բառերն, ընդհանրապես, ցույց են տալիս, որ ծագում են ալնպիսի նախածինից, որ հայերենում կարող էր տալ եւ կամ իւ: Այսպես. ալք շարքի ստուգաբանված բառերից են ալիւր, որ ծագում է հնիւ. *alewr բառից (հմմտ. հունարեն ἀλεωρ), առիւծ, որ ծագում է հնիւ. rewǵ՝ արմատից, և աղբիւր, որ ծագում է հնիւ. bhrevr բառից: Ինչպես տեսնում ենք, այս բառերի մեջ հնիւ. ew-ն է, որի գիմաց հայերենն ունի եւ և իւ: Խոսելով հնդեվրոպական ew երկրարրառի՝ հայերենում կրած փոփոխությունների մասին՝ Մեյլեյն ասում է, թե Տեղալին երկրություն կա եւ և իւ-ի մեջ՝¹ և որեւէ բացատրություն չի տալիս, հիշելով միայն, որ շրթնալինից ստացված w-ից առաջ եւ-ն փնում է անփոփոխ (ինչպես՝ եւթն <*septm), որով և լինում է միայն եւ ձևը, առանց զուգահեռ իւ-ի²: Դժվար չէ կասել, որ բոլոր զույգ ձևերը ծագում են միայն հնիւ. ew երկրարրառից, ըստ որում այդ զուգածները ներկայացրել են ոչ թե լոկ գրալին, այլև, առաջին հերթին, արտասանական տարբերություն: Եւ, քանի որ հինգերորդ և հաջորդ դարերում այդ զուգածներից աստիճանաբար մեկն է գերիշխում, ապա միանգամայն բնական է, որ այդ տարբերությունը ավելի վաղ ժամանակին է վերաբերում: Ըստ որում, ելնելով ալն փաստից, որ եւ և իւ զուգահեռները ծագում են հնիւ. ew-ից բոլորովին նույն բառերում, պետք է, որևէմ, ընդունել, որ այդ զուգահեռները նույնպես ենթադրում են նախնական, նախադրարարյան շրջանի բարբառալին տարբերություններ: Սրա ապացույցն է ալն, որ ժամանակակից բարբառներում այդ բառերի ստացած ձևերն էլ ենթադրում են տարբեր նախածին: Այսպես. զուգահեռ ձևեր ունեցող բառերի գիմաց արդի բարբառներում ունենք եւ, ի, կամ իւ, ու, իրենց փոփոխակներով. ինչպես՝ ալիւր, ալեւր > ալիւր (Վան), ալիւր (Աղուլիս, Մեղրի), ալուր (Առախալ, Համշեն), ալլիւր, ալլիւր (Դարարաղ), ալիւր (Երևան). ֆալիւր > ֆեյիւր (Մեղրի), ֆեօբիւր (Աղուլիս), ֆալիւր (Արարատյան բարբառ), չկա՝ ֆալիւր ձևը, գիւղ > գիւղ (Մեղրի), գեղ (Երևան,

¹ A. Meillet, Esquisse d'une gram. Comp. de l'arm. classique, p. 45.

² Նույն տեղում:

Կարին, Առախալ), կյնիլ (Վան), զեղ (Ն. Նախիջևան). չկա զիղ ձևը, և ալլն: Երբ այս բոլորը համեմատում ենք վերը հիշված երկրորդ շարքի բառերի հետ, որոնք ունեն միայն ըստ երկրաբանության ձևը, ահա համեմատ ենք, որ այս իւ-ով բառերից ոչ մեկն էլ արդի բարբառներում չունի ի-ով ձև, ինչպես սիւն>սիւն (Մեղրի, Աղուլիս), սուն (Վան, Համշեն), սուն, սին (Երևան), սին (Հաճին). ձիւն>ձիւն (Մեղրի, Աղուլիս), ձուն (Ն. Նախիջևան), ծիւն (Վան), ձ'իւն, ձ'ուն (Երևան), ձ'իւն (Հաճին) և ալլն: Զուգադրելով բոլոր բառերն իրար հետ կստանանք հետևյալ ընդհանուր պատկերը.

ալիւր, ալիւր>ալէր, ալիւր, ալիւր
հարեւր, հարիւր>(չկա), հարիւր, հարիւր
գեւղ, գիւղ>գէղ, գիւղ, (չկա)
աղրեւր, աղրիւր>ալուպեր, ալուպիւր, ալուպիւր
ևւղ, իւղ>լէղ, լուղ, (չկա)
արիւն>(չկա), արիւն, արիւն
ձիւն>(չկա), ձիւն, ձիւն
սիւն>(չկա), սիւն, սիւն
ձիւթ>(չկա), ձիւթ, ձիւթ
հիւթ>(չկա), հիւթ, չկա և ալլն:

Հասկանալի է, որ բարբառային ձևերի յուրաքանչյուր շարքն ունի իր հնչյունափոխված տարրերակները, ինչպես՝ արիւն, արուն, տրիւն և ալլն, սակայն մեզ համար այստեղ կարևորն այդ չէ, այլ այն, որ բարբառային ձևերը խմբավորվում են այդ երեք շարքում: Դա՛նի որ առաջին շարքի ձևերն ունեն միայն այն բառերը, որոնց զույգ ձևերը (եւ-ով և իւ-ով) վկայված են գրաբարում, ապա անմիտելի է դառնում, որ հնիւ. բա երկրաբանը հին հա-լերեն բարբառների մի մասում պահպանվել է անփոփոխ (եւ), իսկ մյուս մասում՝ դարձել իւ: Հակառակ պարագայում առաջին շարքի ձևերը պետք է ունենային նաև սիւն, ձիւն և ալլ բառերը: Երա լավագույն ապացույցն է ռիւսել բառը: Հայտնի է, որ գրաբարում արմատի սովորական ձևն է հիււ. միայն եփրեմի «Մատենագրութեան» մեջ (ա. տիւ.) կա հիււ ձևը: Բայց այդ ձևը սխալագրությունն է, այլ ներկայացնում է հիււ-ի օրինաչափ դու-գահեռը, որից էլ բարբառներում ունենք հիւսսել (Հաճին), հիւսսիլ (Սվեդիս), հիւսիլ (Զեյթուն, Նարեկ): Մյուս կողմից, այն բառերը, որոնք ունեն միայն իւ-ով ձևը, չունեն առաջին շարքը, բայց ունեն երկրորդ և երրորդ շարքերը: Այստեղից էլ պետք է եզրակացնել, որ այդ բառերի իւ երկրաբանը ենթարկվել է պարզացման ու վերածվել պարզ ի ձայնավորի, ինչպես որ ուրիշ բարբառներում էլ վերածվել է պարզ ու-ի, և ինչպես որ եւ-ն էլ վերածվել է պարզ ի-ի (գէղ, ալեր են): Անշուշտ դա համեմատաբար նոր երևույթ է, համեմատյալ գեպս, ոչ ավելի հին, քան մեր թվարկության առաջին դարը, քանի որ ասորերենից փոխառված ձիւթ բառի մեջ էլ այդ բարբառ-ներում ունենք ի: Այսպիսով, եւ և իւ դուգահեռը հին հայերեն բարբառների տարրեր ձևերն են, իսկ բարբառային է և ի ձևերը՝ համեմատաբար նոր առաջացած, նոր հայերեն բարբառներին հատուկ երևույթ: Մեր այս եզրակա-ցությունը զեւղ, եւղ, ալեւլ են ձևերի նախնական գոյություն մասին մի նոր ապացույց է վերը հայտնած մեր այն կարծիքի, որ -ութիւն մասնիկի -ութէն ձևն էլ ենթադրում է -ուրեւն բարբառային նախաձևը: Մյուս կողմից, իւ-ից

ստացած ի-ի մասին ասվածը, առերևույթ, հակասում է վերը ուրիցն ածանցի մասին հայտնված կարծիքին: Իրոք, ինչո՞ւ մի գեպքում ընդունում ենք, որ իւ-ից ստացվել է ի, իսկ մյուս գեպքում՝ ոչ: Եթե սիւն-ից կարող էր ստացվել սիւն, ապա -ուրիւն-ից էլ հնարավոր էր ստանալ -ուրիւն: Հիւրավի, թվում է, թե հակասությունն ակնրախ է: Բայց թվում է միայն: -ուրիւն ածանցի կրած փոփոխությունները չեն կապվում հիշյալ բառերի իւ-ի կրած փոփոխությունների հետ: Իսկ ապացուցվում է երկու փաստով. առաջինն այն է, որ ուրիւն ածանցի մեջ իւն-ը արմատական չէ, այլ ձևացել է Վ մասնիկի ի բնի և Ո մասնիկի աճած ձևի միացումով, իսկ Ո մասնիկը, ինչպես գիտենք, ունեւ բազմազան ձևեր (-սո, -ոն ևն): Երկրորդը, որ ավելի կարեւոր է, այն է, որ հիշյալ բառերի իւ-ի՝ արդի բարբառներում կրած փոփոխությունները չեն համընկնում -ուրիւն-ի փոփոխությունների հետ: Այսպես, -ուրիւն մասնիկը Վանի բարբառում ունի -ուրեն ձևը, իսկ ալիւր, աղբիւր բառերը՝ ուլիւր, թիւլիւր, սիւն, ճիււ բառերը՝ սոււն, իոււս և այլն: Ազուլիսի բարբառում -ուրիւն-ի գիմաց ունենք -օրիւն, իսկ ալիւր, ճարիւր, ձիւն, սիւն, բառերի գիմաց՝ ուլիւր, ճեօրիւր, ձիւն, սիւն և զիւղ, իւղ բառերի գիմաց՝ գյեղ, եղ. Մեղրու բարբառում ուրիւն-ի գիմաց ունենք -օրիւն, իսկ ալիւր, ճարիւր, սիւն, ձիւն, ձիւղ, աղբիւր, ալսիւնք՝ անխտիր իւ: Այլ կերպ ասած, միևնույն բարբառում ուրիւն մասնիկի իւ-ն այլ փոփոխություն է դրսևորում, իսկ հիշյալ բառերի մեջ եղած իւ-ն՝ այլ: Իսկ սա բավական է համոզվելու համար, որ ուրիւն մասնիկի վրա չի կարող տարածվել այն, ինչ-որ ասացինք հիշյալ բառերի իւ>ի փոփոխության մասին: Ինչ ավելին, կարելի է ենթադրել, որ այս իւ>ի փոփոխությունը կատարվել է ուրիւն մասնիկի ուրիւն ձևի համաբանությունում (անալոգիայով):

Այսպիսով, միանգամայն ընդունելի է դառնում եւ-ով և իւ-ով զուգաձևերի, որպես բարբառային տարրերակների գոյությունը նախագրաբարյան շրջանում (հին հայերեն բարբառներում):

Ծ. Հին հայերենում, ինչպես և բարբառներում ունենք հնիւ. միևնույն արմատից ծագած զուգաձևեր, որոնցից մեկն ունի լ, մյուսը՝ դ: Այս զուգաձևերի առկայությունը որեւէ հնչյունական օրենքով բացատրված չէ: Բացատրությունը դժվարանում է նրանով, որ միևնույն արմատի մեջ, միևնույն պայմաններում հնիւ. լ-ի գիմաց ունենք լ և դ, ինչպես՝ ալիւր և աղալ, մղել և մլել ևն: Հասկանալի է, որ հին հայերեն բարբառների մասին հայտնած մեր տեսակետը և վերը բացահայտած հնագույն տարրերությունները հնարավորություն են տալիս այս զուգահեռները ևս գիտելու որպես հնագույն բարբառային ձևեր: Այս կարծիքը հաստատելու համար հիշենք այդ բառերը և քննության տունք նրանց բարբառային ձևերը: Այդ բառերն են. աղ, աղի և անալի, եղանիլ և լիւնիլ, բող, բողուլ և բուլլ, բուլանալ, ալիւր և աղալ, ծիլ և ծեղ, ծաղ և ծալ, ծալծու, ողողանալ և ուլուլալ, ջիղ և ջիլ, աքաղտղ և աքալալ (միջին հայերեն): Այս զուգաձևերից մի քանիսը նույնությունամբ կան բարբառներում, ինչպես՝ բող և բուլ, աղ, աղի և անալի և այլն: Քանի որ միևնույն բարբառում այդ երկու ձևերն էլ առկա են, ապա նրանց քննությունը մեզ ոչինչ չի կարող տալ ինքուր առարկա հարցի համար: Ուրեմն պետք է գտնենք այն բառերը, որոնք մի բարբառում մի ձևն ունեն, իսկ ուրիշում՝ մյուս ձևը: Այդպիսի բառեր են. եղանիլ և լիւնիլ, ծիլ և

ծիղ, ջիղ և ջիլ, աքաղաղ և աքալալ: Այսպես՝ Ղարաբաղի, Մեղրու, Ասուլի-
սի բարրառներում ունենք միայն լիցել բառից ստացված ձևը (էլիլ, նիլ ևն),
Ախալցխայում և Ախալքալաքում՝ ըլլալ, մինչդեռ Լենինականում, Էղեցի. ջիլ
բառի դիմաց Մեղրիում, Ագուլիսում, Երևանում, Ղարաբաղում, Մարաղայում
ունենք միայն ճիլ, իսկ Կարնո, Ալաշկերտի, Հաճինի, Մշո, Սուչավայի, Սև-
րաստիայի, Խարբերդի և այլ բարրառներում՝ միայն ղ-ով ձևը (ջիղ, ջ'եղ,
ջ'էղ ևն): Աքաղաղ գրաբարյան ձևի դիմաց միայն աքալալ ձևն ունենք այն
բարրառներում, որոնք պահպանել են այդ բառը: Այս փաստերը ցույց են
տալիս, որ, իրոք, հնագույն ժամանակներում զուգահեռ ձևերը բարրառային
տարբերակներ են եղել, որոնք հետագայում, հին հայերեն բարրառների մա-
հացման պրոցեսում անցել են հին հայերենին և նրանից էլ՝ նոր բարրառ-
ներին:

6. Քննության առնելով հայերենի հնագույն բարրառային տարբերու-
թյունների հարցը, Հրաչյա Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» մեջ
(1-ին մաս, էջ 119—126) հիշում է 26 բառ, որոնք հնդեվրոպական ժազում
ունեն, բայց հին հայերենում չեն գործածվել, այլ պահպանվել են միայն
առանձին բարրառներում: Այդ ցարդի բառերին ավելացնում ենք Մեղրու
բարրառի ճիսնիլ «տեսնել», նայել» բառը, որ ժազում է հնիս. *spek՝ ար-
մատից:

Այն բոլոր տարբերությունները, որոնք թվարկեցինք վերը, բարրառա-
յին աչնալիսի տարբերություններ են, որոնք բխում են ուղղակի հնդեվրոպա-
կան նախալեզվից հայերենին անցնելու պրոցեսից և ապացուցում, որ գրա-
բարի, կամ որ նույնն է՝ հին հայերենի՝ հայ էթնիկական համաժողովրդա-
կան լեզվի կազմավորումից առաջ եղել են նախահայերենի բարրառներ,
որոնց հիման վրա էլ հենց կազմավորվել է հին հայերենը: Այդ նախնական
բարրառներն է, որ մենք կոչում ենք հին հայերեն բարրառներ:

Քննելի մի հարց է մնում միայն մեր հողվածը վերջացնելու համար-
դա հնագույն բարրառային տարբերությունների անմիօրինակությունն է:
Իրոք, երբ քննում ենք այդ տարբերությունները, տեսնում ենք, որ բացի
2-րդ և 3-րդ կետերում հիշվածներից, մյուսները ժամանակակից բարրառնե-
րում շատ խառն վիճակ են ներկայացնում: Իրոք, եթե Երևանի բարրառին
հատուկ էր, ասենք թե, ը-ից առաջ բառասկզբում ե ավելացնել, ապա ինչու
նույն բարրառում ունենք նաև ա-ով ձևեր, կամ եթե ը-ով ձևն էր օրինաչափ,
ինչու ղ-ով ձևն էլ առկա է: Վերջապես, միևնույն բարրառում հին իւ-ի դի-
մաց մերթ ե (օր. գեղ), մերթ իւ (օր. հարիւր), մերթ ի (օր. ձին) ձայնա-
վորն ունենալը բոլորովին շփոթ է առաջ բերում: Այսպես, օրինակ՝ նույն
Վանի բարրառում ունենք ալիւր, լոարիւր և լյեղ, Երևանի բարրառում՝ ալիւր,
ախալուր և գ'եղ և այլն: Եթե հիշյալ զուգահեռ ձևերից յուրաքանչյուրը հա-
տուկ էր հին հայերեն բարրառների մի խմբին, ասենք, այն խմբին, որի մեջ
մտնում էր նաև Երևանի տերիտորիայում խոսվող հին բարրառը, ապա՝ սպա-
սելի էր, որ բարրառը ունենար միայն ի-ով ձև, և ոչ թե մերթ՝ այս-
մերթ՝ այն ձևը: Առաջին հայացքից թվում է, թե այս կետն, իրոք, հակա-
սում է մեր պնդումին: Բայց ավելի խորամուխ լինելով հարցի քննության
մեջ՝ տեսնում ենք, որ չի հակասում: Այն փաստը, որ, ասենք, հին հայերեն

¹ Ստուգաբանությունը տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություն-
ագր, 1955, № 11, էջ 39—40:

Եւ ունեցող բարբառի տերիտորիայում ալժմյան բարբառի մեջ գտնուած Լնժ
 մերթ Լւ-ից առաջացած ձև (օր. զԼւղ>զԷղ), մերթ Իւ-ից առաջացած ձև
 (օր. ձԻւն>ձուն կամ ձԻն), նշանակում է, որ հին հայերեն բարբառներով
 խոսող հայկական ցեղային հատվածները հենց հալ ժողովրդի կաղմալորման
 պրոցեսում խառնվել են իրար և ալլալեղու ցեղերի հետ, մի բան, որ ան-
 խուսափելիորեն զուգակցել է ժողովրդի և նրա էթնիկական լեզվի կաղմա-
 վորման պրոցեսին: Մյուս կողմից, դա նշանակում է, որ ժամանակակից հա-
 վերենի բարբառները հին հայերեն բարբառների ուղղակի շարունակութունը
 չեն, այլ նրանց մահացումից հետո՝ հին հայերենից (գրաբարից) առաջացած
 նոր բարբառներ, որոնք միայն վերապրուկային ձևով պահպանել են հին
 հայերեն բարբառների առանձին տարրերը, և այն էլ ոչ թե օրինաչափ կեր-
 պով, իրրե համակարգ (սխտեմ), այլ առանձին հետքերի ձևով: